«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ <<Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը>>

Առարկան՝Հայոց Եկեղեցու պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ ԷԻԼԻԹ ՎԱՐԱԺՅԱՆ

Ուսումնական հաստատություն՝ Երևանի Դ. Սարապյանի անվ. h100 հիմն. դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն. 3

Գլուխ1 .

Առակ,առակի

նշանակությունը. 5

Գլուխ 2
Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը և կարևորությունը սերունդների բարոյական դաստիարակության գործում. 8

Եզրակացություն.....14

Գրականության ցանկ. 16

Ներածություն

Հետազոտական աշխատանքը կրում է ,,Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը ,, վերնագիրը,որի ընտրությունը կարևորվել է ելնելով ժամանակակից հասարակության առջև ծառացած մի շարք կարևորագույն խնդիրներից: Գաղտնիք չէ,որ ցանկացած հասարակության զարգացման համար կարևորագույն խնդիրներից է բարոյական արժեքների սերմանումը,դրանց արժևորումն ու ազգային արժեհամակարգի մաս դարձնելը:

Աճող սերնդի հայեցի և ազգային դաստիարակության խնդիրը ,ինչպես և բոլոր ժամանակներում,այնպես էլ այսօր ,եղել և մնում է եկեղեցու հոգևոր հայրերի և ուսուցչի մտահոգության կարևոր խնդիրը,այն է՝ նոր սերնդին կրթել և դաստիարակել հայրենիքին,պետությանը,ազգային,քրիստոնեական գաղափարախոսությանը հավատարիմ:

Իզուր չէ,որ առաջին հայ թարգմանիչները մեր ազգային հիշողության մեջ հայերեն տառերով դրոշմեցին առաջին ուսանելի և իմաստալից թարգմանված միտքը հենց <<Առակաց գրքից>>,որն ըստ Մեսրոպ Վարդապետի առաջին հերթին դեռահասների կրթության գործը հունի մեջ դնելու համար է,չնայած առակներում առատ նյութ կա նաև մեծահասակների համար:Մաշտոց Վարդապետը Սողոմոն արքային վերագրվող առակների հայտնի գիրքն համարում էր հայ ուսուցչին մանկավարժական խորհուրդներ տվող,իսկ հայ աշակերտի հետ այն կարող էր զրուցել բարոյական հարցերի մասին,նրան կտար իմաստության ու հանճարի,ծնողների ու զավակների փոխհարաբերության ,ընտանեկան հավատարմության ու համերաշխության ,հայրենասիրության,ջանասիրության ու արդարության ,խաղաղության ու մարդկային հավասարության բանաձևերը,կդատապարտեր սուտն ու կեղծիքը,անհնազանդությունն ու ագահությունը,անիրավությունն ու չարիքը,մարդկային բոլոր արատները[1]. . .

Յուրաքանչյուր անձի արժեքային համակարգի ձևավորման հիմքում դրվում են բարոյական այնպիսի արժեքներ,ինչպիսիք են ,,սերը,, ,,ճշմարտությունը,, ,,հավատը,, և ,,հույսը,,: Ի սկզբանե երեխայի մեջ պետք է սերմանել սեր բարոյական այնպիսի արժեքների հանդեպ,որոնք բխում են հավատից,որի ներկայությունը կենսականորեն անհրաժեշտ է մեր կյանքում և ազգի նկատմամբ այդ սերը և հավատը պետք է մեծացնել և ավելացնել: Այս տեսանկյունից հայ ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերը, որոնք հոգեհարազատ են հայ ազգային հոգեբանությանը, առավել արդյունավետ կերպով կարող են ներգործել երեխաների

հուզաշխարհի վրա: Հենց այդ տեսանկյունից էլ հայ գրականության մեջ առանձնահատուկ դեր ունեն առակները, որոնց միջոցով երեխաների մեջ դաստիարակվել են հայրենասիրություն, ազնվություն, աշխատասիրություն, ինչպես նաև ծուլությունը, չարությունը, շահամոլությունը և վախկոտությունը իրենցից վանելու պատրաստակամություն:

1 Մ. Խաչատրյան,<<Գրից մինչև գիրք>>

Իսկ ճշմարիտ քրիստոնյայի դաստիարակության գործում անգնահատելի դերակատարություն ունեն աստվածաշնչյան առակների դաստիարակող բնույթը,և նրանց դերն ու նշանակությունը քրիստոնեական հավատքի հիմքն է, ինչպես որ Հիսուսն էր անուղղակիորեն խրատում իրեն լսողներին՝նրանց պատմելով առակներ:

Հետևաբար նոր սերնդին ևս պետք է առաջնորդել, ուղղորդել և բարոյապես դաստիարակել առակի բարձրարժեք և խորիմաստ օրինակներով, որոնք դեռ երկար դարեր կպահպանեն իրենց ժամանակի թարմությունն ու դիպուկությունը, մտքի խորությունն ու լեզվի ճկունությունը:

Նոր դարաշրջանը,որը հումանիզմի դրսևորման, տեխնիկական առաջընթացի, գիտական ուսումնասիրությունների, տեղեկատվական մեծ հոսքի և զարգացման դարաշրջան է, որտեղ անձի ձևավորվումը, դաստիարակությունն ու զարգացումը պահանջում է առավել զգոնություն,բարոյական արժեքների ճիշտ և գրագետ ներկայացնելը դառնում է կրթության կարևորագույն շեշտադրումներից մեկը:

Հետևաբար ,ելնելով այս համատեքստից ,նպատակահարմար է դիտարկել հետևյալ հարցադրումները՝

. Արդյո՞ք երեխաները կարևորում են առակների նշանակությունը:

. Ինչպիսի՞ դաստիարակչական նշանակություն ունեն աստվածաշնչյան առակները:

Գլուխ 1
Առակ,առակի նշանակությունը

Առակ (առ ակն՝ աչքի առաջ) բարոյախոսական բնույթի գրական ստեղծագործություն է, որտեղ այլաբանության միջոցով ներկայացվում, ծաղրվում և քննադատության են ենթարկվում մարդկանց արատները:

Առակի վերջում սովորաբար հեղինակը դրսևորում է իր հստակ վերաբերմունքը նկարագրածի հանդեպ, որն էլ առակի բարոյախոսությունն է: Առակի հերոսները կենդանական և բուսական աշխարհի ներկայացուցիչներ են, իրեր, լուսատուներ և այլն: Անտիկ շրջանում և միջնադարում առակները արձակ ժանրի ստեղծագործություններ էին, սակայն հետագայում դրանք սկսեցին գրվել չափածո:

Առակները բաղկացած են 2 մասից՝ սյուժեից և բարոյախոսությունից: Սյուժեն դեպքերի, իրողությունների սեղմ շարադրանքն է, իսկ բարոյախոսությունը՝ առակի սկզբում կամ մեծ մասամբ վերջում արտահայտված եզրակացությունը: Առակի հերոսը մարդն է, ում կյանքի, բնավորության հոռի և բացասական գծերը ծաղրվում են այլաբանորեն: Առակներում կենդանիներն ու բույսերը խոսում են մարդկային լեզվով, աշխատում են, օգնում կամ խանգարում միմյանց: Առակներում գովաբանվում և խրախուսվում են լավը, բարին, բարոյականությունը, ջանասիրությունը, ազնվությունը, հայրենասիրությունը, ընկերասիրությունը, գեղեցիկը, մարդկայինը և, ընդհակառակը, ծաղրվում ու դատապարտվում են վատը, չարը, տգեղն ու անմարդկայինը, դավաճանությունն ու վախկոտությունը: Հնում «առակ» բառը նշանակել է նաև խրատ, իմաստություն: Այդպիսիք են Աստվածաշնչում պահպանված Սողոմոնի առակները, որոնք մեծ ազդեցություն են թողել գրեթե բոլոր ժողովուրդների մտածելակերպի վրա:
Հայ գրականության մեջ առակագրությունն սկզբնավորվել է թարգմանությունների միջոցով. դրանք ամփոփվել են «Բարվախոս» («Բարոյախոս») և «Ոլիմպիանի (Ողոմպիանի) առակները» ժողովածուներում, որոնք հունարենից թարգմանվել են V–VI դարերում, այլ տվյալով՝ VII դարում: XI–XIII դարերում ձևավորվել է հայ ինքնուրույն առակագրությունը:
Հայ գրավոր գրականության մեջ առակները թափանցել են միջնադարում. գիտնական, պետական գործիչ, մանկավարժ Գրիգոր Մագիստրոսն իր թղթերում օգտագործել է ամենատարբեր առակներ: Նա, ինչպես երևում է իր նամակներից մեկի մեջ, պատվիրում է դպրոցներում աշակերտներին սովորեցնել քերականության և ճարտասանության հետ նաև առասպելավարժություն, այսինքն՝ աշակերտներին գրել, անգիր անել և մեկնել տալ առակներ, որը շատ հարմար վարժություն է եղել ապագա մեկնաբաններ պատրաստելու համար:
Ուստի առակների ժողովածուները դառնում էին հաճելի ընթերցանության գրքեր նաև աշխարհականների համար և զարգանում զանազան տիպերով և զանազան ծավալով:
Փաստորեն առակը՝ որպես գրական տեսակ, ստեղծվեց, քանի որ մարդ արարածը սիրում է սովորել օրինակով. ընդօրինակելը նրա համար ավելի հեշտ է, քան վերացական խրատը: Այն

դաստիարակչական նպատակ ունեցող գրական տեսակ է և օգնում է մարդուն իրական կյանքում ավելի հեշտ ապրելու. ահա այս առումով էլ առակները հին ժամանակներից մինչև այսօր սիրված են ու շարունակվում են մնալ որպես գրական տեսակ:

Միջնադարի գրական մտքի մեծերը ոչ միայն առակավոր խոսքով էին հորինում,այլև շեշտում էին դրանց նշանակությունը,առանձնահատկությունները:Մեծ ժողովրդականություն են վայելել Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու առակները:

Նրանց ստեղծագործությունները հաճախ դարձել են ժամանակի հոգևոր և աշխարհիկ ,ծիսական և կենցաղային,տնտեսական և քաղաքական խնդիրները լուծելու միջոց:Ներքին ուժերի համախմբման,իրավական հարաբերությունների կարգավորման , սոցիալական հակամարտությունները հարթելու ,քրիստոնեական արժեհամակարգի սերմանմանն էին ուղղված հաճախ առակագիրների գործերը:

Նրանցից առավել ցայտուն օրինակ է Մ. Գոշի <<Դատաստանագիրքը>>,որն իշխողներից պահանջում էր հպատակների հետ վարվել սահմանված օրենքներով,չդիմել ծայրահեղությունների՝հատուցում սահմանելով նրանց համար,ովքեր շինականին,վարձկանին ստիպում էին ուժից վեր աշխատանք կատարել:

Մ. Գոշի առակների ժողովածուն <<Դատաստանագրքի>> գաղափարական մտայնության <<շարունակությունն >> է:Կռահելով,որ մատչելիությամբ և դաստիարակչական բացառիկ առանձնահատկությամբ առակներն առավել անմիջական և լայն տարածում կարող են գտնել հասարակակն լայն խավերի մեջ,Գոշը դիմում է խոսքի այդ տեսակին ,մշակելով ժողովրդական բազում առակներ,դրանց նմանոզությամբ հորինում նորերը[1]:

Գոշի առակների ժողովածուն ընդգրկում է 190 առակ,որոնք ուղղված են տարբեր խավերին,հստակեցնում են կենցաղային ըմբռնումները,ամբողջացնում հայի ազգային նկարագիրն ու դիմագիծը:

Վարդան Այգեկցու անունով պահպանվել են առակների ժողովածուներ, որոնցից ամենահայտնին «Աղվեսագիրքն» է (նկարահանվել է մուլտֆիլմ, 1975 թ., Հայֆիլմ):Այգեկցին առակները սկզբնապես գործածել է քարոզներում՝հիմք դնելով ճառի մի նոր տեսակի,որ առակավոր ճառ է կոչվում:Առակները մատչելի և գրավիչ են դարձրել ճառերը՝հոգևոր սնունդ տալով ունկնդրին:

Այգեկցու <<Արմատ հավատո>>-ն հայ եկեղեցու դավանաբանության և ծիսական կյանքի պաշտպանությունն է՝ընդդեմ քաղկեդոնականության,ընդդեմ դավանաբանական վեճերը հարթելու և կյանքի բնականոն անդորրը պահպանելու ազգանվեր գործին:

Այսօր էլ ,աշխարհի զարգացումը,մշակութային տարբեր արժեքների ազդեցությունն ստիպում է մտածել,որ ինչպես միջնադարի ստեղծագործողներն էին այն ջատագովները,ովքեր պետք է ազգային-քրիստոնեական բարոյական համակարգը ամրապնդողը լինեին,նույնն էլ այսօր՝քաղաքակրթությունների զարգացմանը զուգընթաց,ազգայինի պահպանումն ու քրիստոնեական գիտակցության ամրապնդումը,դառնում է ուսուցչի կարևորագույն խնդիրը,իսկ

1 Ս. Սարուխանյան,<<Հոգևոր մշակույթի նվիրյալներ>>,Երևան 2004

այդ ամենն առավել փայլուն ամրապնդելու միջոցը,անշուշտ մնում է նորից առակների բարոյախրատական իմաստը ճիշտ երեխային հասցնելը:

Ակնհայտ է,որ ուսումնական գործընթացում աշակերտներին սովորեցնելու ամենալավ մեթոդը հենց օրինակով սովորելն է,երեխաները սիրում են ընդօրինակել,նրանց համար ավելի տպավորիչ է այն,ինչը ներկայացվում է կենդանու,բույսի,կամ այլ կերպարների լեզվով ,ուստի առակներով սովորելը,նրանցից դասեր քաղելը,բարոյախրատական իմաստը ճիշտ ընկալելը բերում է երեխայի նկարագրի ավելի ճիշտ ձևավորմանը:

Առակներն ընթերցելիս երեխան ավելի ցայտուն կերպով է տեսնում և բացահայտում լավն ու վատը,համեմատականներ անցկացնում երևույթի այս կամ այն դրսևորման միջև:

Իսկ մենք գիտենք,որ <<ինչպես ազգի ձևավորումը,այնպես էլ ազգային բնավորությունը ձևավորվում է երկար ժամանակի ընթացքում,որն ընդգրկում է տվյալ ազգի ողջ պատմությունը և հանդիսանում է ազգի զարգացման շարժիչ ուժը>>[1]:Հետևաբար պետք է մեր դասավանդման առանցքային նպատակը դարձնենք ազգային-բարոյական արժեքներով երեխաներին ձևավորելը,որի լավագույն միջոցը առակներն են,նրանցից բխող արժեքները յուրացնելը,իսկ երեխաների մոտ առակների հանդեպ վերաբերմունքի ճիշտ ձևավորումը ,անշուշտ,կախված է մեր ճիշտ մատուցումից:

1 . Левон Мелик-Шахназарян,Характер Армянского Народа ,Ереван 1999

Գլուխ 2

Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը և կարևորությունը սերունդների բարոյական դաստիարակության գործում

Կրթության առաջնային խնդիրներից մեկը,ինչպես արդեն նշեցինք,քրիստոնեական բարոյական արժեքների,հայրենասիրության ու ազգասիրության սերմանումն է աճող սերնդի մտքում ու սրտում,սակայն այդ ամենը սոսկ տեսական ձևակերպումներով հնարավոր չէ անել:Քաղաքակիրթ քրիստոնյա ժողովուրդների պատմությունը վկայում է,որ այդ որակները մարմնավորվում են քրիստոնեական ճշմարիտ դաստիարակությամբ ու ապրելակերպով:Իսկ մեր հոգևոր արժեքները վառ պահելու և սերունդներին հայեցի դաստիարակություն տալու համար կրկին պետք է վկայենք ու օգտվենք մեր դպրության ուսանելի և բարի ավանդույթներից,մեր ակունքներից՝ուսումնասիրելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմությունն ու նրա մշակութային ժառանգությունը:

Մեր եկեղեցու նշանավոր վարդապետներն ու հայրապետները սուրբգրային մեկնությունների միջոցով փորձել են Աստծո պատգամները հասու դարձնել հայ մարդուն՝նրա միտքն ու հոգին լուսավորելով Տիրոջ խոսքով և պատվիրաններով:Այս առումով կարևոր են ավետարանական մեկնությունները,որոնց մեջ հայ մեկնիչները անդրադարձել են Տիրոջ հետ կապված դրվագներին: Տերն իր երկրային առաքելության ընթացքում զանազան ձևերով քարոզեց մարդկանց,նրա քարոզչության հետաքրքրական դրսևորումներից են աստվածաշնչյան առակները,որոնց բովանդակությունը առօրյա կյանքից և մարդկային հարաբերություններից էր բխում:Նրա նպատակն էր մարդկանց բացատրել աստվածային ճշմարտությունները:Հայ մեկնիչները իրենց ճառերում մեկնել են նաև տերունական առակները և դրանց պատգամները փոխանցել մեզ: Այսօր առավել քան կարևոր է ոչ միայն իմանալ այդ առակների բովանդակությունը,այլև այսօրվա իրականության մեջ տեսնել մեզ ուղղված այն հոգևոր խորհուրդը,որը բխում է առակից և մեր հոտազոտության հիմնական խնդիրն է,բացահայտել,թե այսօրվա անահատը առակից բխող պատգամները ,արդյոք,դարձնում է իրեն կյանքի ուղենիշ:

Մեր ուսումնասիրության առարկան կդարձնենք աստվածաշնչյան մի քանի առակներիը և փորձենք այն դիտարկել մեր օրերում:

Ինչպես գիտենք,Հիսուսի պատմած առաջին առակը <<Սերմնացանի առակն >> է.

Գալիլիայի ծովի ափին Հիսուսի շուրջը հավաքվեց մարդկանց բազմությունը: Նա նավակ մտավ, մի փոքր ափից հեռացավ և մարդկանց հետ առակներով խոսեց. «Ահա մի սերմնացան ելավ սերմանելու, և երբ նա սերմանում էր, մի մաս սերմ ընկավ ճանապարհի եզերքին, և երկնքի թռչունը եկավ և այն կերավ: Եվ ուրիշ մի մաս ընկավ ապառաժի վրա, ուր շատ հող չկար, և իսկույն բուսավ, քանի որ հողը խորություն չուներ. երբ արևը ծագեց, խանձվեց, և քանի որ արմատներ չկային, չորացավ: Եվ ուրիշ մի մաս ընկավ փշերի մեջ, ու փշերը բարձրացան և այն խեղդեցին: Եվ մեկ ուրիշ մաս ընկավ պարարտ հողի վրա և պտուղ տվեց. կար որ մեկին՝ հարյուր, և կար ու մեկին՝ վաթսուն, և կար ու մեկին՝ երեսուն» (Մատթ. 13: 4-8):

Հետո աշակերտներին ասաց. «Իսկ առակն այս է նշանակում, սերմն Աստծու խոսքն է: Որոնք ճանապարհի եզերքին են, այդ նրանք են, որ լսում են, և ապա սատանան գալիս հանում է խոսքը նրանց սրտից, որպեսզի չհավատան և չփրկվեն: Եվ որոնք ապառաժի վրա են, այդ նրանք են, որ, երբ լսեն, խնդությամբ են ընդունում խոսքը, բայց արմատ չեն բռնում, սրանք միառժամանակ հավատում են, իսկ փորձության ժամանակ՝ հեռանում: Իսկ այն, որ փշերի մեջ ընկավ, այդ նրանք են, որ երբ լսում են խոսքը, աշխարհի հոգսերով, հարստությամբ և զվարճությամբ զբաղված լինելով՝ խեղդվում ու անպտուղ են լինում: Իսկ այն, որ պարարտ հողի վրա է, նրանք են, որ բարի և զվարթագին սրտով լսելով խոսքը՝ ընդունում են այն և հարատևելով պտուղ են տալիս» (Ղուկ. 8: 11-15): [1]

Առակի մեկնությունն հետևյալն է.

Սերմնացանը Հիսուսն է ,իսկ սերմերն իր քարոզներն են,հողը,ապառաժ քարը,ճանապարհը և փշերը տարբեր մարդիկ են,նրանցից յուրաքանչյուրն Աստծո խոսքը տարբեր կերպ է ընկալում և տարբեր կերպ վերաբերվում:Ճանապարհին ընկած սերմերը նման են այն մարդկանց,ովքեր լսում են Աստծո խոսքը ,բայց ուշադրություն չեն դարձնում,հետևաբար այդ քարոզներընրանց սիրտը չի մտնում:

Ապառաժի վրա ընկած սերմերը նման են նրանց,ովքեր լսում են Աստծո խոսքը,ուրախությամբ ընդունում են,սակայն դրանք արմատներ չունեն և տոկուն չեն,հետևաբար նեղության ժամանակ փորձության են ենթարկվում և շեղվում են ճիշտ ճանապարհից:

Փշոտ,մոլախոտով լի հողի մեջ ընկած սերմերը նման են նրանց,ովքեր լսում են Աստծո խոսքը,ցանկանում են հետևել,սակայն նրանց սրտերը մաքուր չեն,այդ պատճառով էլ կյանքի դժվարությունները,երկրային ցանկությունները լավ սերմը խեզդում են և ճշմարիտ քարոզը պտուղներ չի տալիս:

Իսկ պարարտ հողի մեջ ընկած սերմերը նման են այն մարդկանց,ովքեր սիրով լսում,հետևում են Աստծո խոսքին,ուրախությամբ են ընդունում այն և համբերատարությամբ դեկ են կանգնում փորձություններին և հրաժարվում են չար գործերից և նրանց արարքները բարի և արդյունավետ պտուղներ են տալիս:

Առակը չափազանց ուսանելի է այսօրվա երեխայի համար,մեր օրերում երեխան հաճախ է բախվում հասարակության այնպիսի անդամների հետ,որոնց համար անձնական շահն ու հաճույքներն են կարևոր և նա հաճախ է հանդիպում դեպքերի,երբ մարդիկ նեղության պահին մոռանալով Աստծո խոսքը,նրա քարոզած բարոյական արժեքները անտեսում են մյուսներին և նրանց արարքները բերում են վատ և վտանգավոր հետևանքների:Ուստի երեխան հասկանում է,որ հասարակությունը կարիք ունի այնպիսի մարդկանց,ովքեր իրենց արարքներով բարի գործեր և բարի պտուղներ են սերմանում և երեխան գիտակցում է,որ իրենցից յուրաքանչյուրը այդ հասարակության համար կարող է դառնալ հենց այդ մարդը և նա հասկանում է,

1. Հ. Գալստյան,Առակներն ուսուցանում են,Էջմիածին,2014

որ առակի իմաստն ընդունելու համար հավատ է անհրաժեշտ՝առանց սրտի խորամանկության մտավոր քննություն:Ինքնին առակը աշակերտի մեջ սերմանում է հավատ Աստծո խոսքի ,մարդկային գործելաոճի մեջ,մեզանից յուրաքանչյուրը իր գործողություններն քննելիս պետք է կարողանա ճիշտ վերլուծել,արդյոք դրանց հետևանքներն բարի են,բարի պտուղներ կտան և կսովորեցնի երեխային,որ ամուր և հաստատակամ լինի իր հավատի և Աստծո հանդեպ:

Հաջորդ առակը <<Որոմների առակն է>>.

«Երկնքի արքայությունը նման է մի մարդու, որ իր արտի մեջ բարի սերմ սերմանեց: Իսկ երբ մարդիկ քնի մեջ էին, նրա թշնամին եկավ ու ցորենի մեջ որոմ սերմանելով՝ գնաց: Եվ երբ ցորենը բուսավ ու պտուղ տվեց, ապա երևաց և այն որոմը: Տանտիրոջ ծառաները մոտեցան և ասացին նրան. «Տե՛ր, չէ՞ որ քո արտի մեջ դու բարի սերմ սերմանեցիր, ուրեմն որտեղի՞ց է այդ որոմը»: Եվ տերն ասաց նրանց. «Թշնամի մարդ է արել այդ»: Ծառաները նրան ասացին. «Կամենո՞ւմ ես, որ գնանք ու քաղենք հանենք այն»: Եվ տերը նրանց ասաց. «Ո՛չ, միգուցե որոմը քաղելիս, ցորենն էլ նրա հետ արմատախիլ անեք: Թողե՛ք, որ երկուսն էլ միասին աճեն մինչև հունձը, և հնձի ժամանակ ես հնձողներին կասեմ՝ նախ այդ որոմը քաղեցե՛ք և դրանից խուրձեր կապեցե՛ք այրելու համար, իսկ ցորենը հավաքեցե՛ք իմ շտեմարանների մեջ»[1]:

Առակի մեկնությունը հետևյալն է.

Ագարակատերը,որ սերմանել է տալիս ,ինքն է՝Հիսուսը:Ագարակը,որ սերմանվում է,այս աշխարհն է:Ցորենի լավ սերմերը լավ և բարի մարդիկ են՝Երկնից Արքայության հետևողները,որոնց գործերը բարի պտուղներ են տալիս:Թշնամին,որ որոմ ցանեց,սատանան է:Որոմի վատ սերմը չարի որդիներն են,որոնց արարքները անօրինություններն են:Հունձքը աշխարհի վերջն է,հնձողները հրեշտակներն են՝ագարակատեր Հիսուսի մշակներն ու սպասավորները:

Ցորենն ու որոմը առանձնացնելը վկայությունն է այն բանի,որ ամեն մեկն այս կյանքում իր արած գործերի համար արժանի հատուցում պետք է ստանա:

Առակը նաև բացատրում է Աստվածային նախախնամության գաղտնիքներից մեկը՝չարերի նկատմամբ ցուցաբերված աստվածային երկայնամտության խորհուրդը:Աստվածային բարկության և արդարության նշաններն անմիջապես չեն սփռվում աշխարհի վրա,որովհետև չարերին հասցված վտանգներից կարող են վնասվել նաև բարիները,և վերջապես,չար մարդկանց հնարավորություն է տրված զղջալու և ուղղվելու:

Իսկ առակը մեր օրերում առավել ,քան արդիական է:Որևէ մեկիս համար գաղտնիք չէ,որ յուրաքանչյուրս գնահատվում և հատուցվում ենք մեր կատարած արարքների համար,ուստի ինչքան բարի և արժանավոր են մեր արարքները,այնքան գնահատելի և հարգանքի արժանի է մեր անձը,և նա,ով չար և վտանգավոր է,պետք է արժանի փոխհատուցում ստանա:

Սակայն կարևոր է հետևյալ միտքը և կարծում եմ,որ մեր հասարակության մեջ շատ անհրաժեշտ,որ յուրաքանչյուր մարդու տրված է զղջալու և ուղղվելու հնարավորություն,չարը և

1. Հ. Գալստյան,Առակներն ուսուցանում են,Էջմիածին,2014

բարին իրար հետ կողք-կողքի լինելով թույլ է տալիս նկատել,զգալ և գնահատել դիմացինի արարքները,համեմատել սեփական արարքների հետ,զգալ տարբերությունները և փոխել սեփական վարքագիծն ու արարքների ուղղվածությունը և գիտակցել,որ վաղ թե ուշ մենք գնահատվելու և պատասխան ենք տալու մեր արարքների համար:Եվ այստեղ տեղին է հիշել ժողովրդական խոսքը . <<Ինչ ցանես,այն էլ կհնձես>>-ուրեմն պետք է բարիք գործել,որպեսզի բարի պտուղներ քաղենք:

Հիսուսի պատմած հաջորդ առակը <<Անառակ որդու առակն >> է.

«Մի մարդ երկու որդի ուներ, նրանցից կրտսերը հորն ասաց, հա՛յր, տո՛ւր քո ունեցվածքից ինձ ընկնող բաժինը: Եվ նա ունեցվածքը բաժանեց նրանց: Քիչ օրեր հետո, կրտսեր որդին, փողի վերածելով ամեն ինչ, գնաց հեռու աշխարհ և այնտեղ վատնեց իր ունեցվածքը, որովհետև անառակ կյանքով էր ապրում: Եվ երբ ամեն ինչ սպառեց, այդ երկրում սաստիկ սով եղավ, և նա սկսեց չքավոր դառնալ: Գնաց-դիմեց այդ երկրի քաղաքացիներից մեկին, և սա ուղարկեց նրան իր ագարակը' խոզեր արածեցնելու: Եվ նա ցանկանում էր իր որովայնը լցնել եղջերենու պտղով, որ խոզերն էին ուտում, բայց ոչ ոք այդ նրան չէր տալիս: Ապա խելքի եկավ և ասաց, քա նի" վարձու աշխատողներ կան իմ հոր տանը, որ առատ հաց ունեն, և ես այստեղ սովամահ կորչում եմ: Վեր կենամ-գնամ իմ հոր մոտ և նրան ասեմ, հա՛յր, մեղանչեցի երկնքի դեմ ու քո առաջ և այլևս արժանի չեմ քո որդին կոչվելու, ինձ վերցրո՛ւ իբրև քո աշխատավորներից մեկը: Եվ վեր կացավ եկավ իր հոր մոտ. և մինչ դ՛եռ հեռու էր, հայրը տեսավ նրան և գթաց. վեր կացավ և վազեց նրան ընդառաջ, ընկավ նրա պարանոցով և համբուրեց նրան: Եվ որդին ասաց նրան, հա՛յր, մեղանչեցի երկնքի դեմ և քո առաջ, այլևս արժանի չեմ քո որդին կոչվելու: Հայր իր ծառաներին ասաց, անմիջապես հանեցե՛ք նրա նախկին պատմուճանը և հագցրե՛ք նրան, մատանին նրա մատը դրեք և նրա ոտքերին՝ կոշիկներ, բերե՛ք պարարտ եզը, մորթեցե ՛ք , ուտենք և ուրախ լինենք, որովհետև իմ այս' որդին մեռած էր և կենդանացավ, կորած էր և գտնվեց:Սկսեցին ուրախանալ: Իսկ նրա ավագ որդին ագարակում էր. և մինչ գալիս էր և տանը մոտեցավ, լսեց երգերի և պարերի ձայնը, և իր մոտ կանչելով ծառաներից մեկին' թէ այդ ի՞նչ Եվ սա նրան ասաց, բո եղբայրը եկել է, և քո հայրը մորթեց պարարտ եզը, որովհետև ողջ-առողջ ընդունեց նրան: Նա բարկացավ և չէր ուզում ներս մտնել, իսկ հայրը դուրս ելնելով' աղաչում էր նրան: Որդին պատասխանեց և ասաց հորը. աքսքան տարի է, որ ծսւռայում եմ քեզ և երբեք քո հրամանները զանց չեմ արել, ինձ երբեք մի ուլ չտվիր, որ բարեկամներիս հետ ուրախություն անեի: Երբ եկավ քո այդ որդին, որը քո ունեցվածքը կերավ անառակների հետ, պարարտ եզը նրա համար մորթեցիր: Հայրը նրան ասաց. որդյակ, դու միշտ ինձ հետ ես, և ամեն ինչ, որ իմն է, քոնն է. բայց պետք էր ուրախ լինել և ցնծալ, որովհետև քո այս եղբայրը մեռած էր և կենդանացավ, կորած էր և գտնվեց»: (Ղակ„ ԺԵ 11— 32)[1]:

Առակի գլխավոր և հիմնական նշանակություն ունեցող խորհուրդներից է ապաշխարության փաստը:

1. Հ. Գալստյան,Առակներն ուսուցանում են,Էջմիածին,2014

Բարոյական իմաստի տեսանկյունից շատ կարևոր է նաև անառակի անկման և նրա վերականգնման բուն և հիմնական պատճառը զննելը:Հայրական տան մեջ վայելած կյանքը աստվածային շնորհի օրինակն է և հենց նույն շնորհի հարգը չհասկանալն է եղել նրա անկման պատճառը:Այս իմաստով շատ կարևոր է,որ աշակերտները կարողանան ընկալել և սեփական օրինակով քննարկել այս ամենը,արդյոք իրենք ըստ արժանվույն են գնահատում և կարևորում ընտանեկան սիրուն միջավայրի և ընտանեկան արժանավայել ապրելու հաճույքն ու կարողանում են պահել այն:Առակի գլխավոր ասելիքներից մեկն էլ վերաբերվում է ընտանեկան բարոյական հիմքերին,արդյոք ճիշտ հիմքերի վրա է դրված բարոյական արժեքային համակարգն ընտանիքում՝մեծի խոսքի հանդեպ վերաբերմունքը,ավագ և կրտսեր եղբայրների հարաբերությունները և այլն:Կարելի է կարծել,որ եթե անառակ որդին մանկությունից ու երիտասարդությունից խնամքով կրթված և օգտակար ընդունակության տեր եղած լիներ,ապա դժբախտության մեջ ընկած ժամանակ կարող էր իր մտավոր զարգացմամբ և ունակություններով ոչ թե որպես մի անպիտան խոզարած աշխատեր,այլև իրեն առավել արժանի և ավելի վարձատրվող աշխատանք կգտներ:Հենց այս տեսանկյունից էլ աշակերտների մեջ կսերմանվի հարգանք կրթության ,լավ մասնագետ և պիտանի մարդ դառնալու կարևոր որակը:Նաև շատ կարևոր է ավագ եղբոր վարքագծի քննությունը,որը ընտանեկան հոռի կրթության հետևանք է՝ նախանձոտ ու դժգոհ,անգամ գրեթե հարություն առած եղբորը տեսնելով անգամ եղբայրական սիրո մի նշույլ անգամ ցույց չի տալիս:

Առակը մեր օրերում շատ արդիական է այ առումով,որ մեզանում շատերը անառակ որդու նման ապրում են վայելքներով՝չմտածելով վաղվա օրվա մասին:Յուրաքանչյուր անհատի,երեխայի մեջ այն պետք է դաստիարակի այն որակը,որ մեզանից յուրաքանչյուր մարդ ինքն է պատասխանատու իր արարքների համար և դրանց դառը պտուղները ինքն է ճաշակում,հետևաբար որևէ որոշում կայացնելուց առաջ պետք է լավ կշռադատել և մտածել,թե ինչի կհանգեցնեն մեր արարքները:Իսկ բարոյական առումով շատ գնահատելի է հոր արարքը,որը չվիրավորվեց որդու գործողություններից,այլ նրա համար կարևոր և գնահատելի էր այն,որ որդին զղջացել և ուղղվելու փորձ էր արել,այսինքն նրա օրինակը մեզ սովորեցնում է,որ պետք է անպայման մարդկանց ներվելու հնարավորություն տալ,մեր օրերում հաճախ են երեխաներն առնչվում մարդկանց անբարյացակամ վերաբերմունքին,քիչ են մեծահոգի մարդիկ,պետք է նրանց մեջ սերմանել մարդկանց ներելու ,նրանց զղջալու հնարավորություն տալու պատրաստակամություն:Եվ ի վերջո, ներելու մասին միայն խոսքերով հնարավոր չէ երեխայի մեջ այն սերմանել,այս առակը կոնկրետ այնքանով է խոսուն,որ երեխան պատկերացնում է,որ ներելու արդյունքում մոլորյալ որդին փրկվում է,նա կործանման եզրին էր և հոր ներմանն արժանանալով նա վերածնվում է ու ինչքան շատ լինեն նման օրինակները և այն տեղափոխենք մեր կյանք,այնքան աշակերտը ներել ու զղջալ կսովորի:

Առակների մեկնությունը,նրանցից բխող բարոյական արժեքներին երեխաներին ծանոթացնելը մեզանում յուրաքանչյուրիս հոգսն է և ուսուցչի բարձրագույն առաքելությունը,քանզի բարոյական

արժեքների և գաղափարական և մշակութային քաղաքակրթությունների վերաարժևորման այս դժվարին ժամանակներում երեխան բախվում է բազում խնդիրների և այդ ճանապարհին ճիշտ կամ գոնե հնարավորինս ճիշտ ճանապարհը ցույց տալու միակ ուղին դառնում է առակների միջոցով նրանց հասցնել այն քրիստոնեական արժեքները,որոնք մեր հոգևոր միասնության,հայեցի դաստիարակության կարևոր հիմքն են:

Եվ,ինչպես ժամանակին հայ մեծանուն ուսուցիչ Մ. Մաշտոցն էր ասում,առակները կծառայեն աշակերտներին՝դառնալով նրանց համար նախաշավիղ-ընթերցարան:

Եզրակացություն

Յուրաքանչյուր ազգի բարոյական և ազգային նկարագրի կերտումը երկարատև և չափազանց կարևոր գործընթաց է,որում անպայման ընդգրկված և անմիջական դերակատարություն ունի եկեղեցին և դպրոցը,որոնք սերունդների դաստիարակության պատասխանատու գործը կրում են պատվով:

Դեռևս անտիկ աշխարհում մտածող Արիստոտելն ասել է . <<Հանրային միասնության հասնելու համար պետք է դաստիարակել առաքինի քաղաքացիներ>>:Առաքինության,բարոյական ճիշտ արժեքների կրող արժանի քաղաքացի հնարավոր չէ ձևավորել միայն տեսական մտքերով,այլև պետք է այն երեխային ներկայացնել առավել պարզ օրինակներով,որոնց լավագույն միջոցները աստվածաշնչյան առակներն են,որոնք իրական կյանքից վերցրած օրինակներ են:Այդ առակներով երեխաների մեջ սերմանում ենք այն հոգևոր բարոյական արժեքները,որոնք երեխայի մեջ ձևավորում են պարտքի և պատասխանատվության ,շրջապատի և սեփական արարքները գնահատելու և արժևորելու կարողություն,երեխային կսովորեցնի բարիք գործելու ,հավատարմության,բարին չարից զանազանելու,արդարության և ազատության գաղափարները,քանի որ կյանքից բխող կենդանի օրինակներ են հետևաբար առավել քան տպավորիչ և մնայուն են դառնում :

Իսկ որպեսզի երեխան սովորի բարիք գործել ,նա պետք է սովորի պայքարել իր անձնական արատները և սխալները ուղղելով,դրանք նկատելու և զգալու համար էլ աստվածաշնչյան առակները լավագույն օրինակներն են,որոնք ստիպում են մտածել և խորհել սեփական սխալների մասին,գտնել դրանցից ազատվելու ուղիները:

Անշուշտ մեր կատարած դիտարկումներն հետազոտական աշխատանքի շրջանակներում գալիս է փաստելու,որ քրիստոնեական առակներն ,ընդհանրապես, երեխաների արժեքային համակարգի ձևավորման գործում ունեն ուրույն նշանակություն,նրանց միջոցով երեխան առավել քան տպավորիչ է ընկալում և դիտարկում այս կամ այն բարոյական արժեքը,այդ ամենը նա ընկալում է ավելի կոնկրետ օրինակով,դիտարկում դրանցից բխող հետևանքները և հաճախ երբ այն կոնկրետ օրինակներով դիտարկում և քննարկում են իրենց շրջապատի դեպքերից,արդյունքն ակնհայտ է դառնում:

Այսպիսով,երեխաների քրիստոնեական դաստիարակության ,բարոյական արժեհամակարգի ձևավորման մեջ աստվածաշնչյան առակներն ունեն անգնահատելի նշանակություն,հետևաբար առակների ուսումնասիրումը դպրոցում պետք է իրականացնել ժամանակակից մեթոդական տարբեր միջոցներով,որոնցից առավել նպատակահարմարներից է դերային (կերպարային) ներկայացման միջոցով,կրկնակի գրառումների մեթոդի միջոցով,երբ աշակերտը արտահայտում է սեփական վերաբերմունքը թեմայի այս կամ այն մտքի վերաբերյալ ,նաև T- աձև աղյուսակի միջոցով,երբ աշակերտը գրառում է երևույթի դրական և բացասական կողմերը՝ դրանով արտահայտելով իր վերաբերմունքը այս կամ այն արժեքի կամ հատկանիշի վերաբերյալ և այլ մեթոդներով և զարգացնելով սովորողի հետևյալ կարողունակությունները ունենում ենք ցանկալի

վերջնարդյունք՝լեզվական գրագիտություն և կարողունակություն,սովորել սովորելու կարողունակություն,ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն,որն անձի դաստիարակության գործընթացում հանրակրթության հիմնական նպատակներից է:Իսկ այս ամենի ճիշտ վերլուծությունը և աշակերտների մեջ բարոյական ճիշտ և կայուն քրիստոնեական արժեհամակարգի ձևավորումը հայեցի դաստիարակության և ազգայինի պահպանման լավագույն օրինակը պետք է դառնա և դասավանդման մեջ ինչքան այս հիմքերն ամուր են դրված,այնքան առավել վստահ կլինենք,որ հայի գենն ու քրիստոնյային վայել ապրելակերպն ու պատվիրանների համակարգը կդառնա կենսակերպ այսօրվա և ապագա սերունդների համար՝առաջնահերթությունը տալով ազգայինին և քրիստոնեականին:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հ. Գալստյան , ,,Առակներն ուսուցանում են,, ,Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին,2014թ
2. Левон Мелик-Шахназарян,Характер Армянского Народа ,Ереван 1999
3. Ս. Սարուխանյան, ,,Հոգևոր մշակույթի նվիրյալներ,, ,Երևան 2004
4. Մ. Խաչատրյան, ,,Գրից մինչև գիրք,, ,Էջմիածին,2012թ